ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Պ.Ռ.Ա.Կ» ՍՊԸ-ի
Տնօրեն՝Ֆ. Զալինյանին

Հարգելի Ֆ. Զալինյան,

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի(այսուհետ՝ Գնորդ) և «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 10.03.2021թ.-ին կնքված ԱՔԹ-1Մ-ԳՀԱՊՁԲ-21/1-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մատակարարումները կատարել է ուշացումներով, իսկ դեկտեմբեր ամսվանից սկսած մատակարարում չի կատարել:

Բազմիցս դիմել ենք Վաճառողին թե՛ գրությամբ և թե՛ բանավոր ապրանքի մատակարարումը պատշաճ և ժամանակին կատարելու համար, սակայն ուշացումները շարունակվել են: Այս պահի դրությամբ մանկապարտեզը բնականոն աշխատանքը շարունակելու համար սնունդ չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հարկադրված է 2021թ.դեկտեմբերի 7-ից Պայմանագիրը չկատարված մասով մասնակի միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի պայմանագրի ապահովում՝ համապատասխանաբար 46186/քառասունվեց հազար մեկհարյուր ութսունվեց/ ՀՀ դրամ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

« ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ»
ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Գ.Մխիթարյան